



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

### **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

#### **1.3 (29)**

**Естественные и физико-математические науки**  
(География и геология, биология, химия, физика и радиофизика)

**Natural and Physical-Mathematical Sciences**  
(Geography and Geology, Biology, Chemistry, Physics and Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## 1.3 (29)

### **Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ**

(աշխարհագրություն և երկրաբանություն, կենսաբանություն,  
քիմիա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան  
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան  
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան  
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան  
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով  
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան  
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան  
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան  
Ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան  
կ.գ.թ., դոց. Լ. Փանոսյան  
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան  
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան  
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան  
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրոսյան  
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասեղյան  
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան  
ֆ.մ.գ.թ. Մ. Ալեքսանյան  
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

**Редакционная коллегия:**

д.г.н., проф. Т. Варданыан  
д.б.н., проф. Л. Навасардян  
д.ф.м.н., проф. Р. Алавердян  
д.ф.м.н., доц. А. Балабекян  
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов  
д.ф.м.н., доц. Т. Акобян  
к.г.н., доц. С. Суварян  
к.г.н., доц. Г. Алексанян  
к.г.н., доц. М. Григорян  
к.б.н., доц. О. Паносян  
к.т.н., доц. О. Ароян  
к.ф.м.н., доц. С. Мхитарян  
к.х.н., доц. И. Алексанян  
к.х.н., доц. А. Мартирян  
к.ф.м.н., ассист. А. Манаселян  
к.ф.м.н., ассист. А. Варданыан  
к.ф.м.н. М. Алексанян  
к.ф.м.н. Т. Абрамян

**Editorial Board**

DSc, Prof. T. Vardanyan  
DSc, Prof. L. Navasardyan  
DSc, Prof. R. Alaverdyan  
DSc, Associate Prof. A. Balabekyan  
DSc, Associate Prof. Y. Mamasakhlisov  
DSc, Associate Prof. T. Hakobyan  
PhD, Associate Prof. S. Suvaryan  
PhD, Associate Prof. G. Aleksanyan  
PhD, Associate Prof. M. Grigoryan  
PhD, Associate Prof. L. Panosyan  
PhD, Associate Prof. H. Haroyan  
PhD, Associate Prof. S. Mkhitaryan  
PhD, Associate Prof. I. Aleksanyan  
PhD, Associate Prof. A. Martiryan  
PhD, Assistant A. Manaselyan  
PhD, Assistant A. Vardanyan  
PhD M. Aleksanyan  
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈՒԳԸ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,  
Էլ. փոստ՝ sss@ysu.am  
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

## Մնացականյան Նառա

ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, մագիստրանտ  
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., ասիստենտ Ա. Հովհաննիսյան  
Էլ. փոստ՝ [nara.mnacakanyan.2015@mail.ru](mailto:nara.mnacakanyan.2015@mail.ru)

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Կադաստրային համակարգը բնական ռեսուրսների և ինժեներային օբյեկտների վերաբերյալ տվյալներ են, որոնք անցել են զարգացման դարավոր պատմություն: ՀՀ տարածքում հայտնաբերված վիմագիր արձանագրությունները, պատմական աղբյուրներն ու հարուստ մատենագրությունը փաստում են այն մասին, որ միջնադարյան Տավուշում եղել է կադաստրային համակարգի նախատիպ:

Կադաստրային համակարգի նախատիպի մասին տեղեկատվության զգալի մասն ամփոփում են վիմագիր արձանագրությունները: Դրանք ներառում են անշարժ գույքի հետ կապված միջնադարյան տարաբնույթ հարաբերությունները՝ բնութագրելով դրանց էությունը, իրականացման ձևերն ու իրավական հիմքերը: Այդ արձանագրությունները հիմնականում արվել են Տավուշի վանական համալիրների, դրանց կից շինությունների պատերի ու խաչքարերի վրա: Այդ արձանագրությունները բավարար կերպով արտացոլում են թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ ռազմական, և թե՛ հոգևոր կյանքը:

Խոսքը, մասնավորապես վերաբերում է 12-13-րդ դարերում գործած կադաստրային համակարգի նախատիպին: Վերոնշյալ համակարգը նույնպես հիմնված է եղել իրավական հիմքի վրա, որն, ըստ էության, եղել է Մ. Գոշի «Դատաստանագիրք»-ը: Այստեղ ամրագրված են անշարժ գույքի որոշ ձևերի և դրանց հետ կապված իրավական հարաբերությունների մասին հողվածներ: Մասնավորապես, հողագույքային հարաբերությունների ոլորտում այն կարգավորել է ժառանգական, սեփականատիրական, օտարման, հողօգտագործման, կառուցապատման, հարկային պարտավորությունների սահմանման, փոփոխման, դադարման, սահմանների անցկացման հարաբերությունները՝ սահմանելով դրանց իրավական հիմքերը: Իրավական բազան այս ժամանակներում հիմնված է եղել սոցիալ-մշակութային մի շարք առանձնահատկությունների վրա և պարունակել է ինչպես կադաստրային, այնպես էլ սոցիալ-մշակութային կյանքը համակարգող նորմեր ու կանոններ:

Մինչև զարգացած ֆեոդալիզմի հաստատումը, երբ Հայաստանը գտնվել է Արաբական խալիֆայության ենթակայության տակ, հայկական հողերի ժառանգման իրավունքը պայմանական բնույթ է կրել: Խախտված էր հայ հողատերերի ժառանգության տիրապետման իրավունքը, հողին տիրապետում էին մասնավոր ժառանգական իրավունքով, իսկ Արաբական խալիֆայությունը համարվում էր հողի ու ջրի, ինչպես նաև Հայաստանի բնական հարստության գլխավոր տիրապետողը: Սակայն VIII դարի վերջին և հատկապես IX դարի սկզբին Արաբական խալիֆայության

թուլացմամբ վերացավ պայմանական ժառանգական հողատիրությունն ու հաստատվեց ժառանգական խոշոր հողատիրությունը:

IX-X դարի առաջին քառորդում մի կողմից տեղի ունեցավ հողերի վերաբաշխում ավատատիրական տների ու դրանց ճյուղերի միջև, մյուս կողմից՝ հողային մեծ տիրույթներ սկսեցին ձեռք բերել հայկական վանքերը [1]: IX-XIV դարերում, երբ Հայաստանը թևակոխեց զարգացած ֆեոդալիզմի շրջան, որակական փոփոխություններ գրանցվեցին հողատիրական իրավունքի ոլորտում: Նախարարական համակարգի փլուզման հետևանքով հողը նախարարական սեփականությունից վերաձվեց անհատ ավատատերերի ժառանգական մասնատիրական սեփականության: Եթե մինչև ավատատիրական կարգերի հաստատումը հողի տնօրինման իրավունքը պատկանում էր միայն տոհմավագին, ով հողին տնօրինում էր ամբողջ տոհմի անունից, ապա հաստատումից հետո տոհմի կրտսեր անդամները՝ «իշխաններն» էին տոհմավագների նման ինքնուրույն կալվածատեր-հողատերեր, և սեփական տիրույթներում իրականացնում էին տնտեսական ու քաղաքական ինքնուրույն գործունեություն [10]:

Պատմական և վիճակագիր աղբյուրները փաստում են, որ միջնադարյան ավատատիրական ժամանակաշրջանում ձևավորվել էին ֆեոդալական կալվածքն ու եկեղեցական կալվածատիրությունը, որոնք նոր երևույթներ էին ինչպես միջնադարյան Տավուշում, այնպես էլ ամբողջ Հայաստանում: Այսինքն հողային տիրույթները բաժանվել էին երկու խոշոր սեփականատերերի՝ եկեղեցու և ավատատերերի միջև: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ ֆեոդալական կալվածքները հարկման օբյեկտ էին: Հողի հարկը հիմնականում վճարում էին գյուղացիները, ոռոգելի հողի 1/5-ի և անջրդի հողերի 1/10-ի չափով: Այդ հարկը վճարում էին կալվածատիրոջը, որն, իր հերթին, հարկի մի մասը մուծում էր պետական գանձարանին: Այսինքն, իրար էին ծուլվում պետական հարկն ու հողի ռենտան: Ինչ վերաբերում է եկեղեցական կալվածքներին, ապա դրանք ազատված էին պետական հարկերից [9]:

Չնայած այն հանգամանքին, որ միջնադարյան ավատատիրական ժամանակաշրջանը հողային պաշարների սեփականության ոլորտում առաջացրել էր շերտավորում, այնուհանդերձ, գյուղական համայնքները շարունակում էին պահպանել իրենց տնտեսական և իրավական ամուր հիմքերն ու պայքարել հողաբաժանման ենթակա վարելահողերի, արոտավայրերի ու խոտհարքների բռնագանձման փորձերի դեմ, լինեին դրանք ֆեոդալ-հողատերերի, պետական պաշտոնյաների, թե վանական համալիրների կողմից: Գյուղական համայնքը հանդես էր գալիս որպես տվյալ գյուղի հողային ֆոնդի հիմնական մասի տնօրինող: Համայնքի իրավասության տակ գտնվող վարելահողերն ու արոտավայրերը դիտվում էին որպես համայնքային հողի անխախտելի մաս, անկախ այն հանգամանքից, թե ում էր պատկանում դրա օգտագործման իրավունքը: Որևէ հողամասի օգտագործման իրավունքի օտարման ժամանակ պահանջվում էր գյուղական համայնքի միասնական կամքն ու ցանկությունը: Սակայն այս հանգամանքը դեռ չի նշանակում, որ որևէ գյուղի սահմանների

մեջ գտնվող բոլոր հողերն անխտիր գտնվում էին գյուղական համայնքի իրավասության ներքո: Ընդհակառակը, գյուղական համայնքներում հողային տարածությունները բաժանված էին տնօրինության տակ գտնվող վարելահողերի ու արոտավայրերի, մասնավոր սեփականություն դարձած հողերի, գյուղատերերի սեփականացրած հողերի, վանական հաստատությունների օգտագործած կամ նրանց սեփականության տակ գտնվող հողերի և անմշակ ու խոպան հողային տարածությունների [5]:

Գյուղական համայնքի բոլոր անդամներին պատկանող ու պարբերաբար հողաբաժանման ենթակա հողային ֆոնդից զատ գյուղում կային նաև այս կամ այն ընտանիքի կողմից սեփականաշնորհված կամ սեփականաշնորհման գործընթացում գտնվող հողեր: Համայնքներն արդեն իսկ օտարված անշարժ գույքի նկատմամբ իրենց իրավունքները վերականգնում էին սեփականատերերի վախճանի դեպքում, երբ նրանք ժառանգներ կամ կտակ չէին թողնում [5]:

Ընդհանրացնելով Տավուշի մարզի XII-XIII դարերի սոցիալ-տնտեսական իրավիճակի բնութագիրը, պարզ է դառնում, որ զարգացած ավատատիրության շրջանում տնտեսությունը լիովին սերտաճել էր քաղաքականությանը: Տեղերում կենտրոնների կառավարումն իրականացնող իշխանավորներն ամենախոշոր հողատերերն էին՝ իրենց կալվածքների լիիրավ տերերը: Այս դիրքին եթե նախկինում հասնում էին միայն հասարակության ազնվական խավի ներկայացուցիչները, ապա միջնադարի զարգացած այս հասարակարգում՝ նաև ֆինանսական միջոցներ ունեցող, երբեմն նույնիսկ աննշան ծագում ունեցող մարդիկ [6]:

Անդրադարձ կատարելով Տավուշի տարածաշրջանում հայտնաբերված վիմագիր արձանագրություններին, կարելի է հիմնովին պատկերացում կազմել անցած հազարամյակում անշարժ գույքի հետ կապված բազում գործընթացների, դրանց բնույթի ու իրականացման ձևերի մասին: Մեսրոպատառ վիմագիր արձանագրությունները երևան են եկել գրերի գյուտից տասնամյակներ անց՝ 5-րդ դարի կեսերին: Հայ միջնադարյան վիմագրերը փորագրվել են դասական գրաբարով, միջին հայերենով, բարբառախառը՝ գրաբարով և տեղական բարբառներով: Հայ վիմագրությունը բովանդակային առումով բաժանվում է վեց տարատեսակների՝ հիշատակագրային, շինարարական, նվիրատվական, իրավա-կանոնական, կրոնա-բարոյական, խառը: Դրանցից միայն չորսն ունեն անշարժ գույքի հետ կապված գործարքներին առնչվող նշանակություն՝

1. նվիրատվական,
2. շինարարական,
3. իրավա-կանոնական,
4. խառը [3]:

Տավուշի մարզի Զուխտակ վանքի, Մաթոսավանքի, Դեղձուտի վանքի, Հաղարծնի, Գոշավանքի, Մակարավանքի, Մորո Ձորոյի, Սրվեղի և Առաքելոց վանքերում ուսումնասիրված գույքային հարաբերություններին առնչվող վիմագրերի մեծ մասն ունի նվիրատվական և շինարարական բովանդակություն: Հազվադեպ են հանդիպում

իրավականոնական բնույթի վիճաբեր: Կան նաև խառը բնույթի վիճագիր արձանագրություններ, որոնք, ըստ էության, շինարարական և նվիրատվական գործարքների արդյունք են:

Նվիրատվական բովանդակությամբ վիճագիր արձանագրություններում հատուկ նշվում է գործարքի ժամանակը, նվիրատուների անունները, նվիրատվության նպատակը, անշարժ գույքի անվանումը և վկաները: Նվիրատուն իր նվիրատվության համար ստանում է բարոյական հատուցում՝ հոգու փրկության համար պատարագներում հիշատակվելու ակնկալիքով: Նվիրատուի ցանկությամբ եկեղեցու հայրերը նշանակում են պատարագի օրերի քանակը: Վիճագիր արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան հողատարածքներ, այգիներ (ամբողջովին կամ մասամբ), ջրաղացներ, ձիթհարք-սրանոցներ, կրպակներ, խանութներ նվիրատվություն անելու վերաբերյալ [3]:

Երկրի ռազմական անկայունության պատճառով հաճախ իշխանավորներն ու մեծատուններն ունեցվածքը որպես նվիրատվություն հանձնում էին իրենց տոհմին սպասարկող եկեղեցուն՝ այդպիսով փորձելով ապահովագրել գույքն օտար նվաճումներից, քանզի եկեղեցապատկան կալվածքները, համարվելով սրբատեղի, հազվադեպ էին ենթարկվում հարձակումների: Օրինակ՝ այսպիսի բովանդակություն ունեն Նոր Գետիկ վանական համալիրի նվիրատվական վիճագիր մի քանի արձանագրություններ: Աստվածածին եկեղեցու ներսի մասում, 13 տող շարադրանքով վիճագիրը հայտնում է, որ Ատասեփ անունով իշխանը եկեղեցուն է նվիրել «Թագավորակացի» անունով հողամասի կես [2]: Նվիրատվական արձանագրություններում հատուկ նշվում են այն հարկերն ու տուրքերը, որոնց վճարումից այդուհետև ազատվելու են նոր սեփականատերերը: Այս մասին է փաստում նաև Նեքնեքի թողած արձանագրությունը, ըստ որի՝ այգու նոր սեփականատեր Նոր Գետիկի վանքն ազատվում է հարկային պարտավորություններից [2]:

Ինչ վերաբերում է շինարարական վիճագրերին, ապա դրանցում արտացոլվել է այս կամ այն կառույցի (եկեղեցի, մատուռ, գավիթ և այլն) շինարարության փաստը: Որպես կանոն այս արձանագրություններում նշվում են կառուցող անձանց, նրանց հարազատների, օգնականների, վկաների, աջակիցների անվանումները, կառուցման և ավարտի տարեթվերն ու շինության անունը: Օրինակ՝ Նոր Գետիկի վանական համալիրի մաս կամզող Աստվածածին եկեղեցու կառուցման վերաբերյալ վիճագիր արձանագրությունը շեշտում է բոլոր աջակիցների անունները [2]: Ընդունված է կիրառել «եղաւ աւարտ շինութեան», «կառուցաւ», «կատարեցաւ» և «շինեցաւ» կաղապարային բանաձևերը [3]:

Երբեմն հնագույն կամ խաթարված կառույցները վերանորոգելու ժամանակ նույնպես կիրառվում էին «կառուցաւ» և «շինեցաւ» բանաձևերը: Նման պարագայում պետք է հասկանալ վերանորոգել, վերակառուցել, վերականգնել իմաստներով: Այսպիսի վիճագիր արձանագրության օրինակ է Գոշավանք վանական համալիրի շինարարական արձանագրություններից մեկը: Վիճագիր արձանագրությունը, որը



պատկանում է ժամանակի մեծահարուստ իշխան Ումեկիի որդի Ճարին, վկայություն է պարունակում եկեղեցու վերանորոգման մասին: Ըստ արձանագրության՝ եկեղեցին վերանորոգվել է Դաստապետ և Իգնատիոս վարդապետների ձեռքով՝ Ճարի օժանդակությամբ:

Նվիրատվական արձանագրությունների նմանությամբ են կազմվում իրավականոնական բնույթի պայմանագրերը կամ համաձայնագրերը, որոնք փորագրվում են տաճարների, տաճարամերձ շինությունների կամ առանձին հուշակոթողների վրա: Փաստագիրը ստորագրում էին վաճառքին մասնակցող երկու կողմերն ու վկաները՝ ստորագրություններով և կնիքով վավերացնելով կատարված գործարքը: Թագավորը կամ ազնվականն իրավական ակտը կնքում էին իրենց արքունական կամ իշխանական մատանիներով, իսկ մյուսները պարզապես «մատանում էին», այսինքն՝ ձեռքի մատով դրոշմում էին փաստաթղթի վրա [3]:

Մեզ են հասել իրավական բնույթի բազմաթիվ վիճագիր փաստագրեր ջրից օգտվելու (ջրօգտագործման իրավունք), ջրադացներն ամբողջությամբ կամ մասնակիորեն նվիրաբերելու, գյուղերի սահմանները որոշելու (սահմանաքարերի կամ սահմանախաչերի միջոցով), հարկերի ու տուրքերի հաստատման, նվազեցման կամ իսպառ վերացման, ջրի և հողատարածքների համար բազմաթիվ վեճերի ու խռովությունների կարգավորման վերաբերյալ: Վիճագրերում կան մի շարք վկայություններ այն մասին, երբ ժողովրդի սոցիալական ծանր վիճակը հաշվի առնելով՝ երկրի բարձրագույն իշխանություններն ու տեղական գրավատները նվազեցրել կամ իսպառ վերացրել են ազգաբնակչությունից գանձվող հարկերն ու տուրքերը: Մարդասիրական բնույթի այս իրավական ակտերը կատարվում էին աշխարհիկ և հոգևոր առաջնորդների համաձայնությամբ և համատեղ ջանքերով: Այսպես օրինակ՝ Հաղարծին վանքի առաջնորդ Յովանէս Արմանեցին, ելնելով ժողովրդի սոցիալական պայմաններից, Գետիկի վանքին և նրա ժողովրդին ազատում է հարկային պարտավորություններից [2]:

Հողագույքային հարաբերություններին առնչվող խառը բովանդակություն կոչվում են վիճագիր այն արձանագրությունները, որոնցում առկա են շինարարական, նվիրատվական, իրավա-կանոնական բնույթի վկայություններ, որոնք հանդես են գալիս տրամաբանական սերտ կապվածությամբ՝ կազմելով բնագրային մեկ ամբողջություն: Այս տիպի վիճագրերը կրել ու պահպանել են այնպիսի գործարքներ, որոնք բովանդակորեն պարունակել են մի քանի գործարքների այնպիսի համադրություն, ինչպիսին է՝ գույքը գնելու, կառուցապատելու և նվիրտվություն անելու գործարքների համախումբը: Այսպիսի օրինակները միջնադարյան կադաստրային մոդելում հաճախ են հանդիպում: Դրանցից մեկում ասվում է, որ Կարինից գաղթած պարոն Ումեկին Ջաքարյան իշխաններից գնելով նոր Գետիկի վանական համալիրը, վանքապատկան գյուղերն ու այգիները նվիրատվություն է անում եկեղեցուն [2]: Նոր Գետիկի վանքի նմանատիպ բովանդակությամբ նվիրատվական արձանագրություններից մեկն էլ պատկանում է Նեքնեք իշխանին: Ըստ Նեքնեքի արձանագրության՝

նա, Առինջ գյուղում գնելով մի այգի, նվիրատվություն է արել վանական համալիրին: Խառը բովանդակության վիմագիր արձանագրությունները համեմատաբար ծավալուն են և փորագրվում են գերազանցապես մայրավանքերի և տոհմական եկեղեցիների պատերի տեսանելի մասերին [3]:

Պատմական հարուստ ժառանգությունը, վիմագիր արձանագրությունների զգալի բազան, հայ մատենագրությունն ու միջնադարյան Տավուշում գործած իրավական հիմքերը ցույց են տալիս, որ միջնադարում իրականացվել են անշարժ գույքին առնչվող այնպիսի գործարքներ, ինչպիսիք են՝

1. ժառանգական հարաբերությունները (ըստ կտակի և ըստ օրենքի),
2. նվիրատվական հարաբերությունները,
3. կառուցապատման հարաբերությունները,
4. բազմաքայլ գործարքներ,
5. վարձակալական հարաբերությունները,
6. առքուվաճառքի հարաբերությունները,
7. հարկերի սահմանումը, նվազեցումն ու դադարումը,
8. սահմանների առանձնացում և սահմանանիշերի տեղադրումը:

Ժառանգական հարաբերությունների մասին բազմաթիվ փաստարկներ են մեզ հասել միջնադարյան պատմագրության միջոցով: Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ ներկայացրել է փաստարկներ միջնադարյան Տավուշի և Հայաստանի սահմաններում իրականացված ժառանգական հարաբերությունների մասին: Դրանք հիմնականում վերաբերում են հայրական ժառանգության փոխանցմանը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է օրենքով փոխանցվող ժառանգությանը:

Ըստ Գանձակեցու հայտնած տեղեկատվության՝ Չաքարե իշխանի մահից հետո նրա ժառանգությունը փոխանցվեց միակ որդուն՝ Շահնշահին: Որդու փոքրահասակ լինելու պատճառով նրա ժառանգական զանգվածը ժամանակավորապես կառավարեց նրա եղբայր Իվանեն, ով եղբոր մահվանից հետո իր վրա վերցրեց եղբորորդու խնամակալությունը: Տղան մեծանալով ժառանգեց հոր թողած «Հայրենի իշխանությունը» [4]: Ժառանգական հարաբերությունների մասին վկայություններ են պահպանվել նաև թագավորությունը հորից որդուն անցնելու մասին: Ըստ այդմ, Տաշիր-Ձորագետը Կյուրիկյանների թագավորության ժամանակ ժառանգությունն անմիջականորեն փոխանցվել է հորից որդուն: Թագավորության հիմնադիր Գագիկ թագավորի մահից հետո գահը ժառանգել է նրա ավագ որդին՝ Դավիթը, ապա՝ Դավթի որդին՝ Կյուրիկե I-ը [8]:

Միջնադարյան Տավուշում իրականացված նվիրատվական բնույթի գործարքների մասին տեղեկանում ենք մեծամասամբ վիմագիր արձանագրություններից: Նվիրատվական արձանագրություններում հիմնականում նշվել են նվիրատու(ներ)ի անուն(ներ)ը, գործարքի աջակիցների և վկաների անունները, գործարքի իրականացման տարեթիվը, նվիրատվության նպատակը, անշարժ գույքի անվանումը

(ոչ բոլոր դեպքերում): Միջնադարյան Տավուշի վիմագրական աղբյուրներում նվիրատվական բնույթի արձանագրությունները զգալի թիվ են կազմում և հիմնականում վերաբերում են իշխանական տների կողմից վանական համալիրներին արված նվիրատվություններին: Տավուշի վանական համալիրների վիմագիր աղբյուրներում պահպանվել են նվիրատվական տարաբնույթ գործարքներ ամրագրող վիմագիր արձանագրություններ: Այսպես օրինակ՝ Նոր Գետիկի վանքում պահպանված նվիրատվական արձանագրություններից մեկը, որը պատկանում է Գոհար Խաթութին, վկայում է, որ նա վանական համալիրին է նվիրել Թսագոմ գյուղում գտնվող մի այգի և մի ազատ շինական [2]: Նվիրատվական արձանագրություններում բազմիցս կարելի է հանդիպել շինականների օտարման հանգամանքին, ինչն, ըստ երևույթին, պայմանավորված է ճորտատիրական հասարակարգի հաստատմամբ:

Նվիրատվական արձանագրությունների շարքում մեծ հետաքրքրություն են ներկայացնում որպես շինարարություն արձանագրված վիմագրերը: Այսպիսի բովանդակային տարրեր պարունակող վիմագրեր են պահպանվել Հաղարծնի վանական համալիրում և Ջուխտակ վանքում: Ջուխտակ վանքի նույն բովանդակությունն արտահայտող երկու վիմագրերը ցույց են տալիս, որ միջնադարում նվիրատուները կարող էին իրենց նվիրատվությունը ձևակերպել իբրև արդեն կառուցված շինությունների առանձին հատվածների գնում: Սարգիսը և Մայրացյալը, վճարելով Աստվածածին եկեղեցու հարավային և հյուսիսային ավանդատների մոտավոր արժեքները, գործարքները ձևակերպել են իբրև շինարարական օժանդակություն [2]: Այսինքն, նվիրատուները գնել են դեռևս չկառուցված անշարժ գույքը և կատարել նվիրատվություն: Արդյունքում նվիրատվական բովանդակության գործարքը ստացել է շինարարական բնույթ՝ իրականում չարտահայտելով այն: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ գործարքների արձանագրման այս փաստը կապված է եղել սոցիալ-տնտեսական կամ իրավական հանգամանքների հետ:

Միջնադարյան Տավուշի կառուցապատման հարաբերությունների մասին հիմնական վկայությունները պահանվել են վանական համալիրներում զետեղված շինարարական արձանագրություններում: Այդ արձանագրությունները, որպես կանոն, տեղեկատվություն են պարունակել կառուցապատման, դրա իրականացման թվագրության, իրականացնողների, երբեմն նաև քաղաքական անցուդարձի ու տնտեսական իրավիճակի մասին: Նման արձանագրությունները հասնում են մի քանի տասնյակի և հիմնականում փաստում են ժամանակաշրջանի մեծատունների կառուցած եկեղեցիների և դրանց սպասարկման համար անհրաժեշտ օժանդակ միավորների մասին:

Ըստ Մաթոսավանքի՝ 1247 թ.-ին արված արձանագրության՝ Յորդանա անունով մի մեծահարուստ է կառուցել Մաթոսավանքի Սբ. Աստվածածին եկեղեցին: Մեկ այլ արձանագրության համաձայն՝ Խաչատուր Վարդապետ Տարոնացու առաջնորդության օրոք Խալթը կառուցել է Հաղարծնի Սբ. Կաթողիկե եկեղեցին: Վիմագիր աղբյուրներում վկայություններ են պահպանվել նաև վերակառուցման մասին: Ըստ

Հաղարծնի 1681 թ. -ին արված արձանագրության՝ թիֆլիսաբնակ Ջիթաղայանները և փահրապետցի Խոջգյուլը վերանորոգել են Սբ. Գրիգոր և Աստվածաին եկեղեցիները:

Միջնադարյան Տավուշում իրականացված հողօգտագործման այդ ձևի մասին փաստում է Կիրակոս Գանձակեցին: Նրա «Հայոց պատմություն» աշխատության մեջ վկայություն է պահպանվել վարձակալական հարաբերությունների մասին: Ըստ այդմ, Արճեշ քաղաքի բնակիչ Աստվածատուրը, ով մեծահարուստ ու բարյացակամ մարդ էր, վարձակալության էր տվել իրեն պատկանող խանութները և ստացված հասույթն օգտագործել բարեգործական նպատակներով (ոչխարի մորթիներ, կտորեղեն գնելով, դրանցից հագուստներ է կարել և բաժանել աղքատներին) [4]:

Միջնադարյան Տավուշում անշարժ գույքի վաճառքի միջոցով օտարման մասին վկայություններ են պահպանվել վանական համալիրներում զետեղված վիմագրերում: Մոնղոլ աշխարհակալ Արղուն Իվխանի (1283/4–1291) և վրաց Դեմետրե Բ Անձնագո թագավորի (1275–1289/91) օրոք գրված Գոշավանքի արձանագրություններից մեկը, որը հանգամանալից վերլուծել են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի VI պրակի կազմողները, վկայում է Նոր Գետիկի վանքի և նրան պատկանող կալվածքների առքուվաճառքի մասին: Ըստ «Դիվան հայ վիմագրության» VI պրակի կազմողների՝ Նշանավոր մեծահարուստ պարոն Ումեկի որդի Ճարի այս արձանագրությունը միակ աղբյուրն է, որ հաղորդում է Ն. Գետիկի վանքը, վանքապատկան գյուղերն ու մյուս կալվածքները Ջաքարյան իշխանների կողմից՝ Կարինից գաղթած Ումեկին վաճառելու մասին:

*«Իմ հայրն Ումեկն գնել էր զԳետիկի ի ԽՌ է (40.000) կարմիր դուկատի»*, - գրում է Ճարը: Նկատի ունենալով այս գումարի վիթխարի արժեզինը վկայված ժամանակաշրջանում, պետք է կարծել, որ Ումեկը ձեռք է բերել վանքն այն սահմաններով, որոնք հաստատել էին Ջաքարյանները, ինչպես նաև հետագայում վանքի սեփականությունը դարձած մյուս գյուղերն ու կալվածքները: Ն. Գետիկի վանքի սույն առքուվաճառքը 1242–1250 թթ. կատարվել է Ջաքարյան Ավագի և Ումեկի միջև: Իսկ թե ինչ իրավույթներ ունեւր ամիրսպասալար, աթաբեկ Ավագ Ջաքարյանը (1213–1250 թթ.) Նոր Գետիկ վանքի նկատմամբ, որ վաճառքի հանեց կրոնական այդ հաստատությունը, պատասխանը գտնում ենք Կիրակոս Գանձակեցու մոտ: Պատմիչի հաղորդմամբ վանքի կառուցման համար տարածքը Տանձուտի կոչվող ձորում հատկացրել է մեծ իշխան Իվանե Ջաքարյանը՝ Ավագի հայրը [2, 7]:

Հետագայում՝ 1283 թվականին, վանական համալիրն իր կալվածքներով գնում է (4000 դուկատով) նաև Ումեկի որդի Ճարը, ապա նվիրատվություն անում Գոշավանքի Սբ. Աստվածածին եկեղեցուն:

Սահմանների նկարագրության սկզբունքը կիրառվել է ինչպես անշարժ գույքի օբյեկտները, այնպես էլ սեփականություն հանդիսացող տարածքների սահմանները, մասնավորապես՝ վանական հաստատությանը պատկանող սեփականության սահմանը նկարագրելու ժամանակ: Հայ պատմագրության մեջ Տավուշի տարածաշրջանում սահմանների վերաբերյալ առավել ամբողջական փաստաթուղթը Նոր

Գետիկի վանքի շրջակա սահմանների վավերագիրն է, որը մեր օրեր է հասել վիմագրության միջոցով: Վիմագիր արձանագրությունը, որը նկարագրում է Գոշավանքի ամբողջական սահմանները, Գոշավանքի առքուվաճառքը նկարագրող միևնույն արձանագրությունն է: Այն ներկայացնում է նաև Զաքարյան իշխանների կողմից վանական համալիրի համար հաստատած սահմանների նկարագրությունը. «*Եւ ընծայեցին եկեղեցոյն սահման ջրադարձիք լեռնէ ի լեռոն*» [2]: Հետագայում իշխանների և հարուստ ավատատերերի նվիրատվությունների հաշվին վանական համալիրի սահմաններն ավելի ընդարձակվեցին՝ նրան դարձնելով ժամանակաշրջանի խոշոր հողատեր:

Հարկային հարաբերությունների մասին հիշատակություններ են պահպանվել և՛ պատմական աղբյուրներում, և՛ վիմագրերում, իսկ դրանց սահմանման, գանձման, դադարեցման իրավական կարգավորումների մասին՝ Մ. Գոշի «Դատաստանագրքում»: Ս. Խաչիկյանի «Հայկական գյուղական համայնքների մասին» աշխատությունը հայտնում է, որ գյուղական համայնքներում և ավատատերերին պատկանող շրջաններում հարկերը սահմանում, նվազեցնում և դադարեցնում էին հողերի սեփականատերերը: Հարկահավաքությամբ զբաղվում էին ավատատերերի նշանակած պաշտոնյաները՝ ձեռնավորները, որոնք ազդեցիկ ընտանիքների անդամներ էին: Ֆեոդալական կախման մեջ գտնվող այս պաշտոնյաներն իրենց ենթակա գյուղերում կամ շրջաններում հարկադրում էին հարկահանման ենթակա օբյեկտները, որոշում հարկի չափը և վերահսկում հարկման գործընթացը [5]:

Պատմական ու վիմագիր աղբյուրներում պահպանվել են վկայություններ հատկապես հարկերի դադարեցման կամ նվազեցման մասին: Օրինակ՝ Նոր Գետիկի վանքի արձանագրություններից մեկը, որը պատկանում է Հաղարծնի և Գոշավանքի հոգևոր առաջնորդ Յովանէս Արմանեցուն, փաստում է, որ նա 1260 թ.-ին Նոր Գետիկի վանքին և նրան պատկանող գյուղերի բնակիչներին ազատում է հարկային պարտավորություններից: Վիմագիր արձանագրությունից դժվար է հասկանալ, թե խոսքն ինչ հարկի մասին է, սակայն ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է Գոնցա Խաթունին (Զաքարյաններին) վճարվող աշխարհիկ, վարչական հարկին կամ եկեղեցապատկան գյուղերի բնակիչների կողմից եկեղեցուն վճարվող աթոռահարկին. «*Աստուծով, ես՝ ՏՐ Յովանէս Արմանեցի ազատ գրեցի զԳեպկա ժողովորդիս ի հարկէ, որ տաին յաթոռն, յիշխանութեան Գոնցա Խաթունին, ի խնդրո Կիրակոս վարդապետին...*» [2]: Առավել հավանական է կարծել, որ վերացված հարկը վերաբերել է եկեղեցուն վճարվող աթոռահարկին, քանի որ դրա վերացման հիմքերը կապված են եկեղեցու հոգևոր առաջնորդի հետ:

Որպես կանոն նվիրատուներն անշարժ գույքի միավորներ նվիրելիս ազատվում էին հարկային պարտավորություններից: Նրանք երբեմն վերացնում էին իրենց կողմից օտարված (հիմնականում նվիրատվության միջոցով) գույքի նոր սեփականատիրոջ հարկային պարտավորությունները: Այս մասին են փաստում վիմագիր աղբյուրները: Ըստ Նոր Գետիկի վանքի արձանագրություններից մեկի՝ տեղի իշխան

Վասակի որդի Նեքնեքը, գնելով մի այգի, հետագա մշակության համար առանց հարկի նվիրատվություն է անում եկեղեցուն: Նույն վանքի մեկ այլ արձանագրություն հայտնում է, որ Դսեղի Մամիկոնյանների նշանավոր ներկայացուցիչ Մարծպան իշխանն ու իր չորս որդիները՝ Ասլանբեկը, Գրիգորը, Ամիրան և Սարգիսը, Նոր Գետիկի վանքին են նվիրում Ողջաբերդ գյուղում գտնվող մի այգի և գութանի հող՝ վերացնելով այդ գույքի համար գանձվող հարկերը:

Միջնադարյան Տավուշի հողագույքային հարաբերությունների ոլորտում բազմաքայլ գործարքների էությունը, բովանդակությունը, իրականացման կարգն ու գործածության փաստը մատնանշում են վանական համալիրներում պահպանված խառը բնույթի վիճագիր արձանագրությունները: Ըստ էության, այդ գործարքները հողագույքային հարաբերությունների մի քանի ձևերի միասնություն են՝ իբրև իրավական մեկ ամբողջություն: Նման գործարքներն իրականացվել են բազմաբնույթ հարաբերությունները մեկ իրավական հիմքով վավերացնելու նպատակով: Մեզ են հասել փաստող բազմաթիվ օրինակներ, որ այդ գործարքներն իրականացվել են:

Ըստ 1206 թ. Հաղարծնի վիճագրերից մեկի՝ Սմպատի որդի Խալթը Քանաքեռում գնել և վանական համալիրին է նվիրել մի հողամաս: Համանմանորեն 1201 թ. Շինուհայրը գնել և Ջուխտակ վանքին է նվիրել մի այգի կամ հողամաս, որի անունը չի պահպանվել:

Միջնադարյան Տավուշի պատմական աղբյուրների, վիճագրության, մատենագրության ուսումնասիրությունները վկայում են, որ կադաստրային համակարգի պատմության հիմքերը կապված են այդ ժամանակաշրջանի հետ: Առաջին հերթին կադաստրային համակարգի նախատիպի գուրծունեության մասին են փաստում վիճագիր արձանագրությունները, որոնք բովանդակալից ներկայացնում են միջնադարյան Տավուշում տեղի ունեցած հողագույքային հարաբերությունները՝ նկարագրելով դրանց իրականացման կարգը, գործարքի առարկան, գործարքների կողմերին, նրանց իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրավական հիմքերը: Այդ արձանագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակաշրջանում գերակշռել են կառուցապատման ու նվիրատվական հարաբերությունները: Փոքր թիվ են կազմել իրավական այլ գործարքները, որոնցից է հարկային հարաբերությունների իրականացումը:

Ինչ վերաբերում է նվիրատվական հարաբերություններին, ապա կարող ենք ասել, որ դա պայմանավորված էր ոչ այնքան շատ զարգացած հասարակարգով, որքան քրիստոնեական հավատալիքների ազդեցությամբ ու սեփականության ապահովագրման միտումներով: Ինչպես տեսանք, ավատատիրական այս ժամանակաշրջանը թե՛ սոցիալ-տնտեսական, և թե՛ ռազմական առումներով պարունակում էր անկայունության տարրեր: Հողատիրական նոր հասարակարգի առաջացումը շերտավորում էր առաջացրել հասարակության մեջ, ինչով պայմանավորված էր սոցիալ-տնտեսական անկայունությունը, իսկ արտաքին թշնամին առաջացրել էր ռազմական անկայունություն: Այս անկայուն իրավիճակներով էր պետք է պայմա-

նավորել հասարակության վերին խավերի հսկայածավալ նվիրատվությունները: Այդ գործարքների մյուս կողմում միշտ կանգնած էին վանական համալիրները, որը բացատրվում է ինչպես քրիստոնեական հավատալիքների ազդեցությամբ, այնպես էլ վանական համալիրների սեփականության «անձեռնմխելիությամբ»՝ որպես հոգևոր սրբատեղի: Այս է պատճառը, որ ավատատիրական հասարակարգի ձևավորման ժամանակաշրջանում խոշոր ֆեոդալների կողքին աճում ու ընդարձակվում էր եկեղեցական կալվածատիրությունը:

Այս գործընթացներով պայմանավորված, հողային սեփականությունը բաժանվել էր երկու խոշոր՝ աշխարհիկ և հոգևոր ճյուղերի: Աշխարհիկ ճյուղում սեփականության սուբյեկտներ էին թագավորն՝ իր ընտանիքով, ավատատերերը՝ իրենց տոհմերով, և իրենցից կախման մեջ գտնվող ավատներն ու ֆինանսական միջոցներ ունեցող քաղաքացիները: Հոգևոր ճյուղում տարածվում էր եկեղեցու մենաշնորհը:

Ինչ վերաբերում է այդ հարաբերությունների իրավական հիմնավորմանը, ապա տեսանք, որ ժամանակաշրջանի օրենսդրական կարգավորումների հիմքում դրված է եղել Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Գոշի աշխատությունը կարգավորել է ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ հասարակության կրոնական, մշակութային, ընտանեկան և այլ հարաբերությունները: Հողագույքային հարաբերությունների տեսանկյունից այն կարգավորել է այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են սեփականության իրավունքը, նվիրատվությունը, կառուցապատումը, առքուվաճառքը, ժառանգությունը, վարձակալությունը, գրավը, սահմանների որոշումն ու սահմանանիշերի տեղադրումը և այլն: Այդ իրավական հիմքերով են իրականացվել միջնադարյան Տավուշում անշարժ գույքին առնչվող բոլոր գործարքները:

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք այն եզրակացությանը, որ միջնադարյան Տավուշում գործել է կադաստրային համակարգի նախատիպ, որն, ըստ էության, հիմնված է եղել իրավական հիմքերի վրա: Այդ համակարգի գործունեության մասին լավագույնս փաստում են վիմագիր արձանագրությունները, պատմական սկզբնաղբյուրներն ու միջնադարյան հարուստ մատենագրությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] **Առաքելյան Բ. Ն., Աղայան Ծ., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ա., Հակոբյան Ա. Մ., Ներսիսյան Մ. Գ.**, Հայ ժողովրդի պատմություն, 3-րդ հատոր, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 14-7:

[2] **Ավագյան Ս. Ա., Զանփոլադյան Հ. Մ.**, Դիվան հայ վիմագրության, Պրակ 6, ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1977, էջ 44, 64-5, 67, 71, 74, 76, 82, 105:

[3] **Գրիգորյան Գ. Մ.**, Հայկական վիմագրություն, Երևան, 2000, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, էջ 67-78:

[4] **Գանձակեցի Կ.**, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1909, էջ 171-3, 175-6:

- [5] **Խաչիկյան Լ. Ս.**, XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքների մասին, Երևան, 1958, Պատմա-բանասիրական հանդես, էջ 9-10, 12-4, 131-33:
- [6] **Մանուչարյան Ա. Գ.**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուր, Երևան, 2015, էջ 5:
- [7] **Մանուչարյան Ա. Գ.**, Վանքերի առք ու վաճառքի դեպքեր Հայաստանում XIII դարում, Պատմա-բանասիրական հանդես № 2, էջ 15, 153-65:
- [8] **Շահնազարյան Ա.**, Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, Պատմա-բանասիրական հանդես, № 2-3, Երևան, 2009, էջ 1-10:
- [9] **Սուքիասյան Ա. Գ.**, Մխիթար Գոշը և «Հայոց Դասաստանագիրքը», Երևան, 1965, էջ 105-7:
- [10] **Адонц Н. Г.**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, сс. 473-4.

Մնացականյան Նառա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՎՈՒՇՈՒՄ**

**Բանալի բառեր՝** վիմագիր արձանագրություններ, կադաստր, սեփականություն, իրավական բազա, գույքային իրավահարաբերություններ:

Միջնադարյան հարուստ մատենագրությունը, վիմագրական ու պատմական աղբյուրները վկայում են, որ միջնադարյան ավատատիրական հասարակարգում ստեղծվել և վարվել է կադաստրային համակարգի նախատիպ: Այդ մասին են փաստում տվյալ ժամանակաշրջանի հողագույքային հարաբերությունների ուսումնասիրությունները: Կադաստրային համակարգի նախատիպի գործունեության մասին առաջին հերթին վկայում են Տավուշի վանական համալիրներում գետեղված վիմագիր արձանագրությունները, որոնց միջոցով կարելի է գաղափար կազմել հողագույքային հարաբերությունների էության մասին:

Նպատակ ունենալով ցույց տալու, որ միջնադարյան Տավուշում գործել է կադաստրային համակարգի նախատիպ, աշխատանքում ներկայացվել են հողային իրավահարաբերությունների առարկայի, մասնակիցների, իրականացված գործարքների, դրանց իրավական կարգավորման ու իրականացման ձևերի հետազոտության արդյունքները:



## СДЕЛКИ С НЕДВИЖИМОСТЬЮ В СРЕДНЕВЕКОВОМ ТАВУШЕ

**Ключевые слова:** литографические источники, кадастр, собственность, правовые базы данных, имущественные правоотношения.

Богатая средневековая библиография, литографические и исторические источники доказывают, что прототип кадастровой системы был создан и вёлся в средневековом феодальном обществе. Об этом свидетельствуют исследования земельно-имущественных отношений данного периода. О деятельности прототипа кадастровой системы в первую очередь свидетельствуют литографические протоколы, сохранившиеся в монастырских комплексах Тавуша, посредством которых можно составить представление о сути земельно-имущественных отношений.

С целью показать, что в средневековом Тавуше действовал прототип кадастровой системы, в работе были представлены результаты исследования предмета земельных правоотношений, типа и участников осуществленных сделок и способов их правового регулирования.

## REAL ESTATE TRANSACTIONS IN MEDIEVAL TAVUSH

**Key words:** lithographic sources, cadastre, ownership, legal basis, property relations.

The rich medieval chronicle, lithographic and historical sources prove that a prototype of the cadastral system was created and maintained in the medieval feudal society. Studies on land and property relations of this period testify to that. The facts about operation of the prototype of the cadastral system have been described for the first time in the lithographic protocols found in Tavush Monasteries complexes. The descriptions provide a clear idea on the nature of land property relations.

This study aims at demonstrating that the prototype of the cadastral system was maintained in the medieval Tavush. It presents the results of studying the subject of legal relations on property, types of transactions, parties involved into these and legal regulation.